**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**
**ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ**
**ՏՆՕՐԵՆ**

№ ՏԾԻԳ - 938

«23» 12 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի
շրջանակներում գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայությունները: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9-ՏԿՆ-14/25»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ, քան 2015 թվականի հունվարի 13-ը, ժամը 16:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Հասմիկ Օրդուխանյանը:

Հայտերը կբացվեն կայքի միջոցով 2015 թվականի հունվարի 13-ին, ժամը 16:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N307 սենյակ հասցեում:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերումը, որոնք խմբավորված են 13 (տասներեք) չափաբաժինների՝

| Չափաբաժնի համարը | Ծառայության անվանումը |
|---|---|
| | Նախարարի աշխատակազմ |
| 1 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N1 |

| | |
|---|---|
| 2 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N2 |
| 3 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N3 |
| 4 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N4 |
| 5 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N5 |
| 6 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N6 |
| | Նախարարության աշխատակազմ |
| 7 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N7 |
| 8 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N8 |
| 9 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N9 |
| 10 | Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայություն N10 |
| 11 | Սարքավորումների վերանորոգման ծառայություն N11 |
| 12 | Սարքավորումների վերանորոգման ծառայություն N12 |
| 13 | Սարքավորումների վերանորոգման ծառայություն N13 |

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կարիքների համար սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցը պետք է ներառված լինի սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների համար «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագիր կնքած անձանց ցուցակում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

**1) «Պիտանելիության չափորոշիչ».**

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

**2) «Ֆինանսական չափորոշիչ».**

բ. գնային առաջարկ՝ Հավելված N 2: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Բավարար է գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտը, հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 5 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:

Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերով (ծանուցմամբ) նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն սույն գնման գործընթացի շրջանակներում կնքվող պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով (գնման էլեկտրոնային եղանակ) սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ hordukhanyan@transportpiu.am:

Հարգանքով՝

Է. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատարող*
*Գնումների և պայմանագրերի*
*կառավարման բաժին՝ Հ.Օրդուխանյան*
*հեռ. 58-05-23*